

Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նիստի օրակարգի հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշումը մարզպետարան չի ներկայացվել:

Որոշումը մարզպետին ներկայացվել է ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 9-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ, համաձայն որի՝ համայնքի ղեկավարը համայնքի հողային հաշվեկշիռը ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 10-ը ներկայացնում է համապատասխան մարզպետին: Տվյալ դեպքում որոշումն ընդունվել է ս.թ. հուլիսի 24-ին և մարզպետին ներկայացվել օգոստոսի 4-ին:

Որոշմամբ հաստատված հավելվածի վերևի աջ անկյունում նշված որոշման հերթական համարից հետո անհրաժեշտ է գրառել «Ա» տառը: Բացի այդ, տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները և կրճատ կիրառված բառերն անհրաժեշտ է գրառել ամբողջությամբ:

*Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
Հեռ. /0312/ 4-90-00*147
12.08.2020թ.*